



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, ՀայքիՀրապարակ 1

☎/0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2019թ.

<<Ուղղակի ժողովրդավարություն>> ՀԿ-ի նախագահ
պարոն Գևորգ Քոթանջյանին

Հարգելի պարոն Քոթանջյան

Ի պատասխան Ձեր գրության, հայտնում ենք, որ ՀՀ Լոռու մարզպետարանի կարիքների համար գրենական պիտույքների ձեռքբերումը իրականացվել է մրցակցային գնման ձևերով՝ էլեկտրոնային գնման եղանակով: Կազմակերպվել է թվով երեք գնման ընթացակարգ: Թղթի ձեռքբերման համար կազմակերպված էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգին մասնակցել են թվով երեք մասնակից, որոնցից ընտրված մասնակից է ճանաչվել <<Արմես Գրուպ>> ՍՊԸ-ն, որի հետ կնքված պայմանագրի գինը կազմում է 959400 ՀՀ դրամ: Մնացած գրենական պիտույքների ձեռքբերման համար կազմակերպվել է գնանշման հարցման երկու գնման ընթացակարգ, որին մասնակցել են երկու մասնակից: Ընտրված մասնակիցներ են ճանաչվել <<Անկյուն>> ՍՊԸ-ն՝ թվով 18 չափաբաժինների համար և <<Սմարթ Լայն>> ՍՊԸ-ն՝ թվով 2 չափաբաժինների համար, որոնց հետ կնքված պայմանագրերի գինը համապատասխանաբար կազմում է 212870 ՀՀ դրամ և 19100 ՀՀ դրամ: Մրցակցային եղանակով իրականացվող բոլոր գնման ընթացակարգերի դեպքում ընտրված մասնակցին որոշելու համար կիրառվող չափանիշը գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարելու և նվազագույն գին առաջարկելու պայմանն է:

Հայտնում ենք նաև, որ էլեկտրոնային գնումների armeps համակարգը հասանելի է բոլորին, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է տեսնել պատվիրատուների կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ